Տարվա լավագույն մարզչի քվեարկության կարգ

1. «Տարվա լավագույն մարզիչ» անվանակարգում քվեարկության իրավունք ունեն

1. ԶԼՄ-ների ներկայացուցիչները (բացառությամբ ֆուտբոլային որևէ ակումբում աշխատող լրագրողների):

2. Fastex Հայաստանի Պրեմիեր Լիգայի 2022-2023թթ. մրցաշրջանի մասնակից ակումբները (մեկ քվե):

2. «Տարվա լավագույն մարզիչ» անվանակարգում հաղթողի կոչմանը կարող են հավակնել Օրացուցային տարվա ընթացքում Հայաստանի ազգային և տարբեր տարիքային հավաքականները, ինչպես նաև Fastex Հայաստանի Պրեմիեր Լիգայի թիմերը գլխավորած մարզիչները (ներառյալ այն մարզիչները, ովքեր տարվա ընթացքում գլխավորել են մի քանի հավաքականներ և/կամ ակումբներ, կամ այլևս չեն հանդիսանում որևէ հավաքականի/ակումբի գլխավոր մարզիչ):

3. Քվեարկողներին առաջարկվում է վերը նշված սկզբունքով կազմված ֆուտբոլիստների ցուցակը, որոնցից պետք է ընտրել լավագույն երեքին:

Ակումբների ներկայացուցիչները չեն կարող քվեարկել մրցաշրջանի ընթացքում/ տվյալ պահին իրենց ակումբը ներկայացրած/ներկայացնող թեկնածուի օգտին: Քվեարկությունը պետք է ուղարկել thebest@ffa.am էլհասցեին՝ նշելով քվեարկության տարբերակը, անուն-ազգանուն, լրատվամիջոցի անուն, կցելով լրագրողական բեյջը և լուսանկարը:

4. Միավորների հաշվառումը կատարվում է ՀՖՖ Հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժնի կողմից՝ հետևյալ կարգով. 1-ին տեղ՝ 5 միավոր, 2-րդ տեղ՝ 3 միավոր, 3-րդ տեղ՝ 1 միավոր:

5. Տարվա լավագույն մարզիչը պարգևատրվում է 2 միլիոն դրամով և հուշանվերով